# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ (2017-2021 ԹԹ) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

---

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 6-ի N 117-Ն որոշմամբ վերանայվեց համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ): 2019 թվականի ՀՀԶԾ-ի կատարման տարեկան հաշվետվությունը կազմվել է համայնքի ղեկավարին կից գործող համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի և համայնքի աշխատակազմի կողմից իրականացված ոլորտային ծրագրերի մոնիթորինգի արդյունքում:

Գյումրի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը ապահովելու, ինչպես նաև կատարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Գյումրի համայնքի հնգամյա զարգացման 2019 թվականի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման աշխատանքներին ներգրավվել են ավագանու անդամներ և շահագրգիռ այլ անձինք:

## 2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մոնիթորինգի նպատակը ոլորտային ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետները, որակը և ծավալները, դրանց տեխնիկական առաջադրանքների ու նախահաշիվների պահանջներին համապատասխան իրականացնելն է և ընթացքում բացահայտված շեղումները վերացնելը կամ, ավելի բարդ դեպքերում՝ ծրագրային փաստաթղթերը վերանայելու և դրանցում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ ՏԻՄ-երին առաջարկություններ ներկայացնելը:

Մոնիթորինգը և գնահատումն իրականացվել է ՀՀԶԾ-ի ֆինանսավորման պլանով և մոնիթորինգի անձնագրով սահմանված ցուցանիշների վերաբերյալ տվյալների հավաքագրման, դրանց փաստացի արժեքները հաշվարկելու, ելակետային ու թիրախային արժեքների հետ դրանք համեմատելու միջոցով (հավելվածներ 1-2): Ցուցանիշների արժեքների շեղումները կամ դրանց պատճառները մեկնաբանված են Հավելված 2-ի «Ցուցանիշի շեղման մեկնաբանություն» սյունակում:

## 3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը է ներկայացվելու 2020 թվականին «Համայնքի տարեկան աշխատանքային պլան»-ը (ՏԱՊ):

Տարեկան պլանավորումը հնարավորություն կտա ի մի բերել տարբեր աղբյուրներից (համայնքի և պետական բյուջեներ, սփյուռք, դոնոր, միջազգային, հասարակական կազմակերպություններ, ձեռներեցներ, բարերարներ, միջհամայնքային ծրագրեր և այլն) ֆինանսավորվող ծրագրերն ու միջոցառումները: Տարեկան աշխատանքային պլանի միջոցով կիստակեցվեն հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված տարեկան կտրվածքով անելիքները, ծրագրերը և միջոցառումները, որոնք բխում են երկարաժամկետ ռազմավարական նպատակներից: Այն կնպաստի ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված ծրագրերի և միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման ռազմավարության հստակեցմանը՝ նախանշելով այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են համայնքում լրացուցիչ միջոցներ ներգրավելու համար՝ համագործակցելով պետական, միջազգային, հանրային և մասնավոր գործընկերների հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ